

**ՀՀ ՎԱՅՈՅ ԶՈՐԻ ՍԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԻՄՔԱՊՈԱՀՈՒԹՅԱՆ և  
ՍՈՑԱԴԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2017Թ.-ԻՆ ԿԱՏԱՐԱԾ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

**Առողջապահություն**

-Մարզային առողջապահական հաստատությունների ֆինանսավորման համար հատկացվել է 611 369.5 հազար դրամ: Մատուցվել է 57676.8 հազ. դրամի վճարովի բժշկական ծառայություններ, որը նախորդ տարվա համեմատությամբ 16064.0 հազար դրամով ավելի է:

2018 թվականին վճարովի ծառայությունների գումարը նախատեսվում է հասցնել 62 968 հազ դրամի, որը 2017թ.-ի համեմատությամբ 5291.3հազար դրամով ավելի է ,ինչպես նաև 2018թ. նախատեսվում է կառուցել մարզային նոր բժշկական կենտրոն:

- 2017թ.-ին պետական պատվերով բուժման և հետազոտման համար մարզին հատկացված 30 տեղից մարզպետի միջնորդագրով հանրապետության բուժհաստատություններ պետական պատվերով բուժման և հետազոտման են ուղեգրվել 28 քաղաքացի

- 5 քաղաքացի պետական պատվերով բուժման և հետազոտման համար մարզպետի կողմից ուղեգրվել են մարզի բուժհաստատություններ:

- Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում առողջարանային վերականգնողական բուժման են ուղեգրվել 34 մեծահասակ և 3 երեխա:

- 2017 թ. -ին հաշվառվել է 373 ծնունդ, 2016 թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 94-ով: Մահերի թիվը 2017թ. կազմում է 530, իսկ 2016թ.-ին՝ 493:

**Սոցիալական ապահովության բնագավառ**

Ձեռնարկվել է համապատասխան միջոցառումներ նպաստի համակարգին պետական բյուջեից հատկացվող միջոցների հասցեականության ապահովման և նպատակային օգտագործման ուղղությամբ: 2017 թվականի ընթացքում նպաստ է ստացել 2006 ընտանիք, որից ընտանեկան նպաստ՝ 1530 և սոցիալական նպաստ՝ 476 ընտանիք: Վճարվել է 693 մլն դրամ նպաստ: Հրատապ եռամսյակային օգնություն է ստացել 100 ընտանիք, վճարվել է 21.6 մլն դրամ: Ավանդների փոխհատուցում է ստացել 217 մարդ, վճարվել է 36.9 մլն. դրամ ավանդ:

Մարզում կենսաթոշակառուների թիվը 10245 է, որոնց տարվա ընթացքում վճարվել է շուրջ 4.9 մլրդ. դրամ կենսաթոշակ:

Մարզի ՁՏԿ -ներում 2017թ. գրանցվել է 1147 գործազուրկ: Աշխատանքի է տեղավորվել 346 մարդ:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի  
առողջապահության և սոցիալական ապահովության  
վարչության պետ



Խ Գևորգյան

10.01.2018թ.